ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2022 թվականի սեպտեմբերի 5 –ի № 10

Լսելով Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝

- «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգում»,
- «Կրթական ելքային արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների ու գնահատման միջև կապը: Գնահատման մեթոդների օրինակներ: Գնահատման չափանիշների դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ» ուղեցույցը,
- «Կրթական ելքային արդյունքների սահմանումը»

ուղեցույցերի հաստատման մասին հարցը: (Զեկուցող՝ Ս Ասատրյան)

Համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

Հաստատել համալսարանի

- «ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համակարգում» ուղեցույցը:
- «Կրթական ելքային արդյունքների դասավանդման և ուսումնառության մեթոդների ու գնահատման միջև կապը: Գնահատման մեթոդների օրինակներ: Գնահատման չափանիշների դասավանդման ինտերակտիվ մեթոդների օրինակներ» ուղեցույցը:
- «Կրթական ելքային արդյունքների սահմանումը» ուղեցույցը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հաստատված է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2022թ.սեպտեմբերի 5-ի, №1 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝

Սրբուհի Գևորգյան

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՊՄՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի անկախացումից հետո երկրում տեղի ունեցած համակարգային փոփոխությունների շնորհիվ ձևավորվող շուկայական հարաբերությունները, կրթության ոլորտներում գաղափարախոսական նոր մոտեցումներն ու գործելակերպը էապես խաթարեցին նաև մասնագիտական կողմնորոշման խորհրդային համակարգը: Հին համակարգը դադարեց գործելուց, իսկ նորը, որպես այդպիսին, չստեղծվեց:

Փաստորեն, և խորհրդային տարիներին, և Հայաստանի նորանկախ պետության ժամանակներում պատանիների ու երիտասարդների կողմից մասնագիտության ու զբաղմունքի ընտրությունը կրել է խիստ տարերային, հախուռն բնույթ՝ հիմնականում պայմանավորված լինելով մի շարք հանգամանքներով:

Որպես կանոն, հաշվի առնելով հայկական ընտանիքի բազմադարյա ավանդույթները, ներընտանեկան, միջանձնային հարաբերությունների որակն ու առանձնահատկությունները՝ երեխաների մասնագիտության ընտրության հարցում վճռորոշ է եղել ընտանիքի ավագների, մասնավորապես՝ ծնողների կարծիքը, ովքեր առանձին դեպքերում առաջնորդվել են սեփական նախասիրություններով, առկա նյութական հնարավորություններով, կամ տուրք են տվել ժամանակի գերիշխող մոդային: Որոշակի նշանակություն է ունեցել նաև ծնողների մասնագիտական ավանդույթները շարունակելը՝ պայմանավորված գենետիկ հակումներով: Դեր է ունեցել շրջապատի, ընկերների կարծիքները, նաև՝ պատահականությունն ու դիպվածը: Քիչ տեղ է մնացել *մասնագիտության գիտակցված ընտրությանը:*

2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Ինչպես վկայում են միջազգային փորձի ուսումնասիրությունները, յուրաքանչյուր երկիր, ելնելով սոցիալ-տնտեսական և պատմական զարգացման սեփական առանձնահատկություններից, աշխատաշուկայի և կրթական համակարգի վիճակից ու պահանջներից, ստեղծում և զարգացնում է մասնագիտական կողմնորոշման իր ուրույն ազգային համակարգը:

Ֆրանսիայում մասնագիտական կողմնորոշման մոդելն ունի երկու կարևոր առանձնահատկություն՝ մասնագիտական կողմնորոշման մանկավարժական ուղղվածություն և տեղեկատվական ուղղվածություն: Կողմնորոշման գործընթացները ենթարկվում են օրենսդրական կոշտ կարգավորման և իրականացվում են զրույցների ձևով յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում՝ այդ հաստատության ներկայացուցիչների, սովորողների և նրանց ծնողների մասնակցությամբ:

Մեծ Բրիտանիայում մասնագիտական կողմնորոշման հիմնական խնդիրը ոչ միայն սովորողներին մասնագիտության ընտրության հարցում աջակցելն է, այլև սեփական կարողություններն ու հնարավորությունները աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային կարիքների ու պահանջմունքների համատեքստում գնահատել սովորեցնելը:

ԱՄՆ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի հիմնական խնդիր է համարվում աշխատաշուկայում անձի մրցունակության, ճկունության և կարիերայի հետևողական աճի ապահովումը նրա ողջ կյանքի ընթացքում:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարելի է անել հետևյալ ընդհանրական եզրահանգումը. տնտեսապես զարգացած երկրներում մեծ ուշադրություն է դարձվում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, անձի մասնագիտության ընտրությանը զուգահեռ առաջնահերթություններ են համարվում ինքնուրույնության ձևավորումը, սեփական կարողությունների և հնարավորությունների գնահատումը աշխատաշուկայում, մրցունակության և ճկունության հետևողական ձգտումը:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման գործընթացի հիմնական նպատակներն են՝

ՀՊՄՀ-ում բարենպաստ պայմանների ստեղծումը՝ դիմորդների/ ուսումնառողների կողմից ապագա մասնագիտական գործունեության, կրթության անձնական ուղիների, մասնագիտական ուղղության ազատ և գիտակցված ընտրության համար:

անհատին իր հետաքրքրությունների, կարիքների և առանձնահատկությունների հանապատասխան օժտել շարունակական ուսուցման և կարիերայի զարգացման այնպիսի կարողություններով, որոնք նրան հնարավորություն կտան ՀՊՄՀ մասնագիտությունների շրջանակում ընտրելու ՀՀ աշխատաշուկայում մրցունակ մասնագիտություն և ձեռք բերել աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին համապատասխանող աշխատանք:

ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման գործընթացի հիմնական խնդիրներն են՝

Աշխատաշուկայի և կրթական ծառայությունների մարքեթինգային հետազոտում, սոցիալ-տնտեսական ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն:

Անձի՝ ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում,

Դպրոցների հետ համագործակցային կապի ապահովում և ամրապնդում

Խորհրդատվությունների և նախապատրաստական դասընթացների անցկացում տարածաշրջանների միջնակարգ և ավագ դպրոցներում սովորողների հետ:

Անձին ՀՊՄՀ-ում գտնվելու ընթացքում տեղեկատվության, խորհրդատվության, ինչպես նաև անհրաժեշտ այլ հնարավորությունների շարունակական տրամադրում՝ մասնագիտության կամ զբաղմունքի ընտրության, կարիերայի պլանավորման հարցերում:

Մասնագիտական կողմնորոշման հիմնական մեխանիզմներ են՝

Հանդիպումների կազմակերպում և մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրում քաղաքային և մարզային դպրոցներում, հայորդաց տներում, քոլեջներում,

Միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների և այլի կազմակերպում և մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության տրամադրումդիմորդների, ուսումնառողների և շրջանավարտների շրջանում:

Տեղեկատվության մշտական և շարունակական ապահովում՝ (ԶԼՄ-երի միջոցով դասընթացների կազմակերպման, միջոցառումների անցկացման, բաց դռների և վարպետաց դասընթացների անցկացման մասին):

ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման իրականացման հիմնական սկզբունքներն են՝

1) մասնագիտական կողմնորոշման մատչելիության և կամավորության ապահովում սոցիալական բոլոր խմբերի համար,

2) Դիմորդի, ուսանողի, շրջանավարտի առանձնահատկություններից ելնելով՝ մասնագիտական կողմնորոշման ապահովում,

3) ուսման, կյանքի և աշխատանքի փոխադարձ կապի ապահովում,

4) անձի հետաքրքրությունների և հնարավորությունների առաջնահերթություն և մասնագիտական կողմնորոշման հումանիստական բնույթ,

5) մասնագիտության գիտակցված ընտրություն,

6)սոցիալական գործընկերություն, անընդհատ և շարունակական փոխգործունեության իրականացում գործատուների հետ՝ նրանց կողմից մասնագետների պատրաստման որակի վրա դրվող պահանջների բացահայտման համար:

Մասնագիտական կողմնորոշման աշխատանքի հիմնական մոտեցումները՝

– մարդասիրական ուղղվածություն,

– ինտեգրում,

– տարածաշրջանային սկզբունք,

– շարունակականության և մատչելիության սկզբունք:

Մասնագիտական կողմնորոշման իրականացման հիմքում ՀՊՄՀ-ն տեսնում է և արժևորում հետևյալ գործոնները՝

1. Մասնագիտական ախտորոշում

դեռահասի, երիտասարդի անհատականության ուսումնասիրում, անձնային որակների ու դրանցից բխող մասնագիտական հակումների բացահայտում՝ թեստավորման, հարցազրույցի, դիտարկման մեթոդներով,

2. Տեղեկատվության տրամադրում

ՀՊՄՀ ընդունվելու հնարավորությունների ու պայմանների մասին,

ՀՊՄՀ մասնագիտությունների մասին,

Ըստ մասնագիտության / առանձին մարզերի/ աշխատաշուկայի վերլուծության մասին,

գործատուի կողմից աշխատողին ներկայացվող պահանջների մասին,

աշխատանք փնտրելու հնարավորությունների և եղանակների մասին:

3. Մասնագիտական խորհրդատվության տրամադրում

աշակերտի կամ ուսանողի ունակություններին և հակումներին համապատասխան մասնագիտական հետաքրքրությունների ձևավորում,

մասնագիտությունների և զբաղմունքների բացահայտում՝ արտաքին շահակիցների՝ մասնագետների, փորձագետների, գործատուների հետ հանդիպումների միջոցով,

4. Մասնագիտական համակերպում

այցելություններ ՀՊՄՀ բաց դասերի միջոցով, նաև ծանոթացում մասնագիտության ուսուցման գործընթացին/ դիմորդների համար/,

այցելություններ կազմակերպություններ, ձեռնարկություններ և հիմնարկներ, աշխատանքային պրակտիկայի կազմակերպում / ուսումնառողների համար/:

ՀՊՄՀ մասնագիտական կողմնորոշման տարատեսակներն են՝

– Մինչհամալսարանական մասնագիտական կողմնորոշում,

–համալսարանական ուսումնառության փուլի մասնագիտական կողմնորոշում,

–Ավարտական շրջանի աշխատանքային զբաղվածության ապահովման փուլ / շրջանավարտներ/

Մինչհամալսարանական մասնագիտական կողմնորոշման աշխատանքային փուլը ՀՊՄՀ-ի աշխատանքն է հանրակրթական և միջին մասնագիտական հաստատություններում, ուղղված սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և անձնային ինքնորոշման ձևավորմանը:

Մասնագիտական կողմնորոշման համալսարանական ուսումնառության փուլի ՀՊՄՀ-ի վարչական և մասնագիտական անձնակազմի աշխատանքն է ուղղված լուծելու ուսումնառողների մասնագիտական ինքնորոշման, անձնային և մասնագիտական զարգացման ձևավորման խնդիրները:

Ավարտական շրջանի աշխատանքային զբաղվածության ապահովումը /շրջանավարտներ/ երիտասարդ մասնագետի աշխատանքային զբաղվածության աջակցումն է, նպաստումը

դրսևորելու իրեն մասնագիտական տիրույթում՝ հաշվի առնելով աշխատաշուկայի և գործատուների պահանջները:

ՀՊՄՀ-ում մասնագիտական կողմնորոշման աշխատանքի համակարգման գերակայություններն են՝

Համալսարանում մասնագիտական կողմնորոշման գործունեության որակի ապահովում, վերահսկում և կառավարում:

Ուսումնառողների կողմնորոշման, անձնային և մասնագիտական զարգացման և մասնագիտական ունակությունների ձեռք բերման նպատակով մասնագիտական կողմնորոշման գործընթացի մանկավարժական աջակցության կազմակերպում:

Մասնագիտական կողմնորոշման խնդրում անհատի ինքնորոշման ձևավորման շարունակականության ապահովում:

Մասնագիտական կողմնորոշման տեղեկատվական ապահովում, կայքի, Ռադիո Ֆամայի, «Մանկավարժ» թերթի և այլ աղբյուրների միջոցով:

Մասնագիտական կողմնորոշման ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

Լրատվության և հանրության հետ կապերի վարչություն,

Նախապատրաստական բաժինը,

Համալսարան –գործատու համագործակցության կենտրոնը,

Պրակտիկայի կենտրոնը

Համալսարանի ընդունող հանձնաժողովը,

Ուսումնական ստորաբաժանումները/ ֆակուլտետներ և ամբիոններ/,

Ուսանողական խորհուրդը